09.11.23 - 09.11.23
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դահլիճ

Ս.թ. նոյեմբերի 9-ին՝ ժամը 11:00-ին, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դահլիճում (ԵՊՀ 8-րդ մասնաշենք) տեղի կունենա ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով:

Հոբելյանական գիտաժողովը նպատակ ունի ևս մեկ անգամ վերարժևորելու մեծ գրականագետի գիտական ժառանգությունը, հարգանքի տուրք մատուցելու մեծ գիտնականին և հայ գրականությանը: Գիտաժողովում կարդացվող զեկուցումները նվիրված են ոչ միայն Է. Ջրբաշյանի գործունեությանը, այլև հայ գրականության տարբեր հեղինակների ստեղծագործությունների վերլուծությանը: Հայ բանասիրության ֆակուլտետը գիտաժողովը նվիրում է սիրված գիտնականի և դասախոսի վառ հիշատակին:

Միջոցառմանը ներկա են լինելու ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի ներկայացուցիչներ, Է. Ջրբաշյանի ընտանիքի անդամներ, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, հյուրեր:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am